

ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպեկով.

Քիֆիսում գրվում են միմիայն խմբագրության մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տ է լ է Ք օ Ն № 258.

Խմբագրութիւնը բաց է առուօտան 10—2 ժամ (բացի կիրակի եւ օտն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր անգամ 10 կոպեկ. Տ է լ է Ք օ Ն № 258.

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Ր Գ Ի Գ Ո Ր Ա Ր Ծ Ր ՈՒ Ն Ի

ՄՇԱԿ

Լ Ր Ա Գ Ի Ր Ը

1903 թ. 1-ին

12 ամսվանը	10 ռուբլի
11 »	»
10 »	»
9 »	»
8 »	»
7 »	»
6 »	»
Մտացածները ամսական	1 »

Եւրոպայում 30 Քր., Ամերիկայում 6 դոլլար, Պարսկաստանում 10 ռ.

Հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».

ԲՈՒՎՄԱՆ ԳՆԱՌՈՒԹԻՒՆ

Ժողովրդական բեմ.—Երեւանի ՏԵՍՈՒԹԻՒՆ. Երեւանի լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բաղրամյան դէպքերը. Պարսկաստան. Նամակ Գերմանիայից. Արաւելի լուրեր.—ՀԵՌԱՅԻՐ-ՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱ-ԿԱՆ. Հայոց եկեղեցական ծխական բարեգործութեան մասին:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԵՄ

Մենք առիթ ունեցանք մանրամասն ծանօթանալու ժողովրդական այն բեմի գործունէութեան հետ, որ հինգ ամիսից ի վեր հաստատվել է Հաւլարում: Ընդհանուր ապաւորութիւնը նպաստաւոր է և միութարակ:

Ժողովրդական բեմի ղեկավարող մարմին ունի երեք բաժին՝ ուսուցչ, հայոց և վրաց: Մենք կանգ կառնենք հայ բաժնի վրա:

Մինչև այժմ արված է 17 հանրամատչելի ներկայացում հայերէն լեզուով: Գործի ղեկավար հանդիսացողները սիրողներ են, որոնք իրանց ժամերը նուիրում են պիեսներ ընտրելու, խաղադրոյների խմբեր կազմելու և ներկայացումներ տալու գործին: Այդ սիրողները յաճախ գիտնում են և փորձված դերասանների օգնութեան, որպէս զի թէ ներկայացումները աւելի զբաւէլ լինեն և թէ սիրողները նրանց օրինակ վերցնելով՝ կատարելագործվեն արհեստի մէջ: Պիեսները առհասարակ միշտ փոխվել են և չեն կրկնվել: Նրանք վերցվել են թէ

մեր երկրի և թէ օտար կեանքից:

Միութարական է տեսնել, ինչպէս Հաւլարարի շրջանում ապրող մարդիկ մի տասը, քսան, երեսուն և ամենաշատը յիսուն կոպէկ վճարելով, կարող են ծանօթանալ թատրոնական գրուածքների հետ և ազդել նրանց մէջ դուրս բերված երկուցութիւններից և յայնմիայն զաղափարներից: Թատրոնը, գրաւելով մարդկանց դէպի ընտաւոր և բարոյական գուարձութիւն, կամաց կամաց կը պակասեցնէ այն մարդկանց թիւը, որոնք պէտք է գինետները և ուրիշ գուարձանները դիմելին ժամանակ անպակասելու և աւօրեայ ցաւ ու հոգսից ու փրկիչական աշխատանքից յիտու հանգստութիւն վայելելու:

Մակայն գործի յարատեւութեան և բարձրաձայն համար կարևոր է, որ նա աւելի ամուր հիմքերի վրա դրվի և որոշ կազմակերպութիւն ստանայ: Գովելի է և համակրելի այն պատրաստակները, որով սիրողները մասնակցում են ներկայացումներին, բայց ցանկալի է, որ թատրոնական գործին հմուտ անձինք որոշ ծրարագիր մշակեն և մի յայտնի ղեկավարութիւն հաստատեն ներկայացումների վերաբերութեամբ: Սիրողների մէջ մի քանիսը արդէն բաւական վարժվել են բեմական գործում, բայց կան և շատ անփորձները, որոնց համար շատ կարևոր են հեղինակաւոր և խելացի ցուցումները:

Պիեսների նախօրոք ընտրութիւնը, որոշ յաջորդականութեամբ նրանց ներկայացնելը և առհասարակ ներկայացումների համար աւելի հիմնաւորապէս պատրաստվելը կը մտցնէ գործի մէջ սխտան և վրատահութիւն հասարակութեան կողմից: Իսկ այդ վտտահութիւնը շատ հարկաւոր է, որպէս զի սխտան զեղեցիկ գործը չը վնասվի և ապագայում չը քայքայվի: Մինչև այժմ գեռ աեղի չեն ունեցել դասարտութիւններ և բեմի ծառայել է միայն ներկայացումների համար: Յանկալի է, որ այդ պահան ևս լրացվել, միայն անհրաժեշտ է, որ դասարտութիւններ կարգաւոր գործը շատ լուրջ կերպով մշակվի և ձեռնհաս անձանց միջոցով կատարվի: Այդ բանի համար Հաւլարարի սիրողների ոյժերը թող են և նրանց օգնութեան պէտք է զան «Ժուժկաւորութեան ընկերութեան» աւելի պատրաստված անդամները:

Հաւլարարի ժողովրդական բեմը շինվել է և պահպանվում է Մուրաշովի հոգաւորութեամբ: Իսկ ինքը կարող է պարունակել մօտ 250 այցելողի: Իսկ մեծ թիւ չէ, բայց ներկայ պահանջների համար առայժմ զուհացուցիչ է: Պահանջը աւելի մեծանալուց ներկայացումները կարող են կրկնվել մի կամ մի քանի անգամ: Այժմ պիւսաւոր հոգար պէտք է լինի գործի ամրացումը: Մենք յոյս ունենք, որ այն անձինք, որոնք սիրելով համակրելի նպատակը և համակրելով միասին, արդէն ընթացք են տուել զեղեցիկ գործին, որևորված կը դրան իրանց առաջ տանելու ժողովրդական բեմի զարգացման գործը Հաւլարարի շրջանում:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» հետեւել համարը (№ 86), թագուհի կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդօրովնայի անուանակոչութեան օտնի պատճառով, լոյս կը տեսնէ ուրբաթ, ապրիլի 25-ին:

Կովկասեան ռուսական շրջանի հոգաբարձու Չավադաի որոշել է շրջանի բոլոր զարդներում կազմակերպել գրոյցներ աշակերտների, ծնողների և ուսուցիչների մէջ:

Քիֆիսում հեռագիր է ստացված Բագուից, որ փակասագործները սպանեցին Մանթաշեանի մօտ ծառայող կոմիտէի Միքայէլ Բայանիսարովին: Մարտագանները բռնված են:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ կառավարչական շրջաններում հարց է բարձրացրած առարկայի աշանը հրաւիրել արհեստաւորների համառուական ժողով լուծելու արհեստաւորների կեանքին վերաբերելի մի քանի հարցեր:

«Երկ» լրագրում տպագրված է «Մեր մշտական աշխատակիցներ Գ. Ստարցիլ (VOX) և Ա. Մատիւչիսկի (Մօնթօլ, Յանտօլ) ուղերթով են երկրի սահմաններից դուրս, այսուամենայնիւ նրանց աշխատակցութիւնը մեր լրագրում չի դադարիս:

Գորու գաւառի վակա գիւղից հաղորդում են «Новое Обозрѣніе» լրագրին, որ ապրիլի

18-ին անյայտ չարագործներ կողոպտել են հայոց եկեղեցին:

Երկուշաբթի, ապրիլի 21-ին, դերասանուհի Յալօրսկայա հանդէս եկաւ Փրանսիական հեղինակների Բերտօնի և Սիմօնի «Չաղա» դրամայում: Այդ պիէսում շատ նիւթ է առիթներ ունէր Յալօրսկայա ցոյց տալու իր արտաբանական տաղանդը, իր հմտութիւնները և թողից մեծ ապաւորութիւն հանդիսակոնների վրա: Չաղայի դերի մէջ Յալօրսկայա հանդէս բերեց բուն զգացմունքներով օժտված մի անձնաւորութիւն, որ գիտէ անձուէր կերպով սիրել, համարձակ որոշումներ անել, իր զգացմունքները յարգել տալ: Խաղը նուրբ է և լուռուսումնասիրված: Կոպիտ ընթացակարգի հետ նա կարողանում է կապել նորը հոգեբանական գծեր և ցոյց տալ խոր ըմբռնողութիւն հոգեկան յուզմունքներով: Մշակված տեխնիկան, մտածված խաղը և տեղի ամբողջացումը զարճում են դերասանուհուն բեմի վրա գրաւել, հետաքրքրական և ուսանելի: Չաղան Յալօրսկայի առաջնակարգ դերերից մէկն է:

Կիրակի, ապրիլի 20-ին, Հաւլարարի ժողովրդական բեմի վրա, վրաց սիրողների նախաձեռնութեամբ, օտնվեց վրաց թատրոնի սիրող Գ. Գելիկուրաշվիլիի 20-ամեայ գործունէութեան յօբելեանը: «Մշակի» № 82-րդ համարում տպված լուրից յասնի է ընթերցողին, որ Գ. Գելիկուրաշվիլին ծառայել է ժողովրդական բեմերին, գլխաւորապէս ներկայացումներ տալով գաւառական քաղաքների խուլ անկիւններում, որտեղ չէ եղել դեռ ևս թատրոնի գաղափարը: Ներկայացումից յետոյ տեղի ունեցաւ յօբելեանական հանդիս. Բեմի վրա կանգնած էին բազմաթիւ անձինք, որոնք եկել էին ժողովրդական թատրոններից վրաց թատրոնի խմբից և այլ հիմնարկութիւններից, իրեն պատգամաւորներ: Յօբելեանին ողջունեցին որտալից ծափահարութիւններով: Համադէտը բացեց Հաւլարարի վրաց սիրողների խմբի ղեկաւոր պ. Բեկաշվիլին: Խօսելով մի ճառ, շնորհակալելով յօբելեանի անձինք ծառայութիւնը ժողովրդական թատրոնի ապարէզում: Իրան յաջորդեցին Հաւլարարի հայ սիրողների խմբի կողմից պ. Փիրուսեան ուղերթով, Քիֆիսի ժողովրդական հայ սիրողների խմբի և Աւստրալիական ժողովրդական թատրոնի հայոց բաժնի աէկցիայի կողմից պ. Մամուլեան, վրաց դերասանական խմբի կողմից՝

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՀԱՅՈՑ ԵՆԻՆՏԱԿԱՆ ԵՒ ԱՎԱՆ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹԻՒՆ ՔԱՆԱ ՄԱՍԻՆ

Եվայր առ իս ամենայն վատակեայ և բնականօրէ և ևս հանրոյցից զձեզս: (Մատթ. ծա. 28)

Ո՞վ կարող է ծխել այն ճշմարտութիւնը, որ մարդկային կեանքի ազդաներից մէկը և թերևս ամենադժուարը—ջրաւորութիւնն է, —այդ անտպասելի աղբիւրը ամեն տեսակ թշուառութիւնների, նա մարդկային ցեղի անբաժան ուղեկիցն է, նրա շար ողին, որի աշխարհային աւերումների դէմ մտաբոլում է լարված ոյժերով ներկայ մարդկութիւնը:

Ամենայնիւ, ժամանակներից աղքատը, տնանկը միշտ որոշ չափով կարեկցութիւն է զարթեցրել դէպի իր վիճակը և եթէ առաջ այդ զգացմունքը արտաբայովում էր անգիտակցաբար, ջրի օտնեկան վարդապետութիւնը հաստատվելուց յետոյ նա դառնում է քաղաքակիրթ աշխարհի բարոյական պահանջներից մէկը, որի ազդեցութեան տակ բոլոր լուսաւորված ազգերի մէջ ծնունդ են ստանում բազմաթիւ բարե-

գործական, աղքատախնամ և այլ Աստուածահաճոյ հաստատութիւններ: Տարբաբաղաբար մեզանում այդ վեմը գործի կարևորութիւնը շատ թող արտայայտութիւն է ստացել և մինչդեռ ուրիշ երկիրներում բարեգործութիւնը, իբրև հասարակական կեանքի պահանջներին վրա, հայերին մէջ նա տակաւին ստղծային վիճակում է գտնվում, ունի աւելի պատահական ընաւորութիւն, ուստի և զուրկ է որ և կազմակերպութիւնից:

Ամբողջ Կովկասում գոյութիւն ունի մի Հայոց Բարեգործական ընկերութիւն, որի գործունէութիւնը ներկայ կանօնագրութեան համաձայն Քիֆիսի քաղաքի սահմանից դուրս անցնել չէ կարող. և թէ նկատի առնենք մեր շուրջը օրիորդ թշուառութեան մեծութիւնը, անշուշտ մեզ հասկանալի կը լինի, որ մի քաղաքի կարօտեալներին, այն էլ չնչին թիւով, օգնութեան հասնելը, դեռ շատ քիչ բան կատարել է նշանակում: Մի հաստատութիւն, որ քան էլ մեծ միջոցներով օժտված լինի, այնուամենայնիւ անկարող է աջողութեամբ մաքառել այն թշուառութեան դէմ, որի նուազման համար հարկաւոր է անպայման հասարակութեան եռանդուն ձեռնբեղցութիւնը: Կետեալ բարձր թշուառներին և կարօտեալներին օգնելու գործը մեզանում աւելի նպատակալարմար կը լինէր բաժանել եկեղեցական համայնքների

վրա, տալով նրանց առանձին կազմակերպութիւն և գործունէութեան որոշ ծրագիր. այդ նուերկան ասպարէզի վրա համայնքի գործունէութիւնը այն առաւելութիւնը կունենար, որ իւրաքանչիւր ծուխ, կազմելով մի առանձին ընտանիք, իր վրա կածէր համայնքի թշուառացած անդամներին խնամելու պարտքը, որի համար ինքը համայնքը և կը լինէր պատասխանատու հասարակութեան տուայ: Յանձնելով բարեգործութեան խնամքը այդ սխտեմով բազմաթիւ հասարակական խմբերին, կարելի է ժամանակի և ոյժերի մեծ անտեսութեամբ բեղմնաւորել իւրաքանչիւր ծուխի գործունէութիւնը:

Մենք տեսնում ենք, ինչպէս կեանքը օրէջօր բարձրվում է, ինչպէս գոյութեան անհաւասար կախիւր, խեղճութիւնը, անօգնական ծեղրութիւնը և որբութիւնը, ցաւն ու տառապանքը դարձել են կեանքը շատերի համար մի յուսաբէկ ծանրութիւն, հոգեկան յուզմունքների և հառաչանքների դժոխային աշխարհ:

Մեր աչքի առաջ ամեն օր անցնում են խեղճութեան սիրտ մաշող երեւոյթներ, շարաթ չէ անցնում, որ մամուլի էլքերից չը լսենք օգնութեան աղաղակ այս կամ այն թշուառացած ընտանիքի, մահվան դուռը հասած հիւանդի կամ կարօտեալի համար. եթէ մարդկային թշուառութիւնը—հասարակական աղէտ է, որի

դէմ պէտք է մաքառել հաւաքական ոյժերով, ապա ո՞ւմ բարոյական պարտքն է մտածել և հողալ զրկվածների մասին, եթէ ոչ նոյն համայնքների, որոնց բազկացուցիչ տարրերն են կազմում և այդ ապերանջիկ անհասները: Այդ պարտքը բղխում է նոյն խել այն բարոյական կապի գիտակցութիւնից, որով ընդհանրապէս միացած են ջրիտոնէական հաւաքների անդամները իրար հետ. փորձեցե՛ք քանցել այդ միութիւնը և համայնքը կը հանդիսանայ ձեր առաջ իբրև առանձին անհատների արհեստական ժողով առանց ընդհանուր շարքի կապակցութեան, մի բան, որ այնչափ հակասում է նրա ներքին կազմակերպութեան գաղափարին:

Միական բարեգործութեան խնդիրը նախատեսված է նաև պետական օրէնքով, որի համաձայն թեմական հոգևոր իշխանութեան թոյլատրվում է հայոց եկեղեցիներին կից հիմնել աղքատախնամ հոգաբարձութիւններ, յարմարեցրած Աստրախանի նոյնանման հիմնարկութեան, որի կանօնագրութիւնը բարձրագոյն հաստատված է 1874 թ. յուլիսի 12-ին 1):

Վերջիջիալ օրէնքի հրատարակութեան օրէնք 2) անցան 27 երկար ու ձիգ տարիներ:

1) 1251 յօդ. (ճանօթ.)—XI հատ. I մ. պետ. օր. հրատ. 1896 թ.
2) 1875 թ. հոկ. 30.

պ. Բեգլարի Կային կարգադրումը երկաթուղային դէպոսի աշխատանքներին, Աւստրիական վրաց սէկցիայից և այլ տեղերից: Յօրհանարին մատուցվեց մի դրամական ծրար, բազմաթիւ արծաթեայ իրեղէններ և շորեղէններ մի կապոց: Կարգադրումը և շորհանուրական հետազոտումը, որոնք ստացված էին—Գանձակից, Ալեքսանդրապոլից, Բաթումից, Գուլիստանից և այլ համակարգ անձերից: Յօրհանարը ի սրտէ շորհանուրութիւն յայտնեց իր անի առիթով: Այս բոլորից յետոյ, հանդիսակցները միմեկից ոտի կանգնելով վրացի հետահան Ուլանիձէ հանդիսակցներին կողմից շորհանուրութիւն յայտնեց յօրհանարին և ցաւ յայտնեց, որ 20 տարի առաջ իր հետ գործող անդամները բացակայ են համակարգի յօրհանարին:

«Навстречу» լրագրում կարգում ենք. «Գրիգորի Բուճիստով քանանան, որ թիշ ժամանակ առաջ դատի էր ենթարկված մի շարք չափազանց դատապարտելի յանցանքների համար, ինչպէս հարդարում են, ասարճանակի մի հարուստով վերջացրեց իր կանգնելը կենքի հետ: Հանգուցեալը հայ էր, կրթվել էր Երևանի ուսուցչական սեմինարիայում և էջմիածնում և ապա ընդունել էր ուսուցչականութիւնը»:

«Воспаравед» լրագրում ապագրված է Գրիգորի Բուճիստովի հետեւեալ կոյը. «Օգտնեցէք, Չատիկ առաջին օրերին Գրիգորի վաղաքրում տեղի ունեցան փողոցային անկարգութիւններ հրէաների դէմ: Անգիրն քանակութեամբ վնասված անձինք մնացին առանց պատասխանի և քաղցած: մնացին մեծ քանակութեամբ որբեր և այրիներ: Դրութիւնը չափազանց ծանր է: Անհրաժեշտ է շուտափոյթ և բազմակողմանի օգնութիւն: Բեսարաբիայի նահանգապետի թոյլտուութեամբ ժողովարարութիւն սկսելով Գրիգորի հրէական վնասված ազգաբնակչութեան օգտին, Գրիգորի վաղաքրուները դիմում է Բեսարաբիայի նահանգի բոլոր ընկերներին, օգնութիւն խնդրելով նրանցից—բաւ կարողութեանս»:

Պետերբուրգում կարճ ժամանակից յետոյ կը կազմվի մի աստղաբանական կուրս, որ իրան նպատակ է ընտրել աստղաբանական գիտութիւնների ժողովրդականացումը: Այս նպատակով կուրսը կը հրատարակէ բրոշյուրներ աստղաբանութեան վերաբերմամբ, կը կազմէ ընթերցանութիւններ և կը հիմնէ դիտարաններ՝ ցանկացողներին հնարաւորութիւն տալու համար աստղաբանական դիտողութիւններ կատարելու:

Բաթումի թիւրքական հիւպատոս Բաֆադը, որ մօտ ժամանակներումս նշանակված է Թիւրքիայի կովկասեան ընդհանուր հիւպատոս, հասաւ թիֆլիս—իր պաշտօնատեղին:

ԿԱՐՄԻՑ մեզ գրում են. «Ապրիլի 19-ին տեղիս կուրբի դաշինքում սերտներ խուճը ներկայացրեց մի կօմիտի—«Չօնի փոխարէն գոն»—յօգրուտ հայկաթօլիկաց ծխական դպրոցի վերջում նուագածութիւն կար: Հարցը մուտքի

քանակութեան մասին չէ. միմեկից անոց եղակի, երեքոյն է, որ սերտներ խուճի մէջ մասնակցում էր մի հայկաթօլիկ, իսկ մնացեալները գործի դեկավարողի հետ միասին (թուով 30 հոգի) բոլորն էլ հայ-ուսուսուրչակցներ էին: Վերջինին էր պատկանում և հաւաքված բազմութեան պատկանելի մեծամասնութիւնը: Ով որ ակամատես է եղել դեռ 20—25 տարի սրանից առաջ լուսաւորչական կաթօլիկ հայերի յարաբերութիւններին, նա չէ կարող թագցնել իր ուրախութիւնը, տեսնելով այժմեան համերաշխութիւնը: Ներկայացուցումը մը ղոց անցկացաց, իսկ աւելի բերկրանք պատճառեց նուագածութիւն խումբը»:

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Ամսին 16-ին, երեկոյեան 7½ ժամին, անյայտ չարագործների ձեռքով սպանվեց Մովսէս Գալի անունով մտազործը: Ժամի 6-ին գալիս է նրա մօտ մի անյայտ մարդ ու ստուգ, որ քաղաքի սահմանազրկից մօտիկ գողացած եղջիւրաւոր կենդանիներ կան ու առաջարկում է նրան գնալ ու էփան գնով առնել այն կենդանիները, ինչպէս այդ սովորութիւն է մեր քաղաքի մասագործների մէջ: Ի դէպ, դրանով մտազործները շատ նպաստում են կենդանիներ գողանալուն: Մովսէսը գնում է նշանակած տեղը, որը գտնվում է այգիների մէջ ու իսկոյն և եթ գնդակահար է լինում: Չարագործները անհետանում են: Ասում են, որ այդ սպանութիւնը վրէժխնդրութեան հետեանք է»:

ՆՈՒՅՈՒՑ մեզ գրում են. «Այս ապրիլի 25-ին լրանում է մեր նշանաւոր վիպագրող—հրապարակախօս Բաֆֆիի մահվան 15-ամեայ տարեդարձը: Տեղիս մի խումբ օրիորդներ և երիտասարդներ մտադրութիւն ունեն նրա յիշատակին մի դրակական-երաժշտական երեկոյթ կազմել: Թոյլտուութեան համար դիմված է ուր հարկին և Նուրում այդ տեսակ երեկոյթները անգործութիւն ունենում են: Որպէս ապացոյց կարող է ծառայել անցեալներում Արծրունու յիշատակին տրված երեկոյթը իր մեծ ընդունելութեամբ: Նուրում այդպէս մի քաղաքում, ուր չը կայ պատրաստի բեմ, կամ նոյն իսկ մի մեծ դահլիճ, որ կարելի լինէր յարմարեցնել ներկայացումների համար, շատ նպատակայարմար են լաւ ծրագրված գրական-երաժշտական երեկոյթները, որոնք այժման էլ բեմական յարմարութիւններ չեն պահանջում: Նուրում սրանցից կարող է հոգեկան բաւականութիւններ օտանալ»:

ՀԱՄԱՄԱՆՈՒ գիւղից մեզ գրում են. «Չորս ամիսը լրանում է արդէն, որ մեր գիւղում բուն է դրել բկացաւը (դիֆտերիա): Եր չէ անցնում, որ 1—2 երեխայ չը մեռնեն ժողովուրդը թերահաւատութեամբ է վերաբերվում բժշկութեանը, մեծ դժուարութեամբ արողից համոզել մի քանի ծնողներ, որ իրանց հիւանդ երեխաներին տանեն բժշկի մօտ: Որովհետեւ բժշկին դիմողները երեխաները դեռ նոր էին հիւանդացել, շուտով առողջացան: Շատերը, որոնք իրանց յոյսերը դրել էին Աստուծո և հէջիմ—պատանների վրա, սուսեցին և այժմ ախ ու վախ են անում, որ իրանց տգիտութեանը գոհ գնացին անմեղ երեխաները... Երբ,

քի տարրական վայելքների անմատչելիութիւնը միտ պէտք է լինի չքաւորի նախասահմանված ճակատագրերը: Մենք ամօթաբեր երեկոյթ ենք համարում մի հասարակութեան համար, երբ նրա անջի մտալ լինում են սովալուկ կենսանքից առաջացած մահվան դէպքեր, երբ կենսաբի գաճուութիւնների մէջ տապալկված էակը թողնված է ճակատագրի կամքին՝ անխնայ, անօգնական»:

Դատարար է այն բարեգործութիւնը, որ տարվայ միայն ազիջ օրերին ընդունված օտարութեան համաձայն մի քանի բազմ մտացնել է տալիս թշուարին նրա խեղճութիւնը, որպէս զի նա յետոյ աւելի ևս զգայ իր վիճակի դառնութիւնը...:

Ոչ, մեզ հարկաւոր է մնայուն բարեգործութիւն, առանց բազմական յափշտակութիւնների, որպէս զի նրան ապաւինելով, խեղճ իր դառն և սև օրերին միշտ կարողանայ գտնել միութարութիւն, բարեգործութիւն, որ բղխած լինէր նրան: Այսպիսի պարտաւորութիւնից, տեսնելով սակայն այն ձեւական մտղութիւններից, որոնք այնպիսի յատուկ են մեր բարեգործական հիմնարկութիւններին: Այդ բարձր նպատակին կարող են ծառայել ծխական հոգաբարձութիւնները, որոնց մասին յիշվում է բոլոր բրիտանական եկեղեցիների կանոնադրութիւնների մէջ³⁾»:

³⁾ Որոստասանում ուղղակաւ եկեղեցու համար

այդպիսիներին նախատում են, սկսում են իրանց անվերջ գանգաւերը: «Ախպէր, ինչ անենք, լաւ են աւրում, հալածվող զօրութիւնները մեզնից և մեր պատաններից շատ լաւ են հասկանում հիւանդութիւնների դարմանը, հասնանք անենք, փող չը կայ, հազար ու մէկ պակասութիւն ունենք, որ մինը հոգանք: մեր մեղքից մայրին ճամբէն (երկաթուղին) էլ էկաւ քրէհ-քարվանդ կտրեց, էլի առաջ լաւ էր, հողից, քրկից մի քանի շահի էինք աշխատարարութիւններս ետաւ տանք»: Հիւանդ էր իսկ էլ Ալեքսանդրապոլ տանելու համար 4 մանէթ ճամբի ծախս և հարկաւոր, 3 մանէթից պակաս էլ, հէր օխնած, չօխտուրը չի վեր աւնըմ, էր արեց 7 մանէթ. է ինձ պէս քեանք մարդուն արեղից ա էտար փողը... Կան և հարուստ մարդիկ, որոնք տգիտութիւնից և կոյր շահաւորութիւնից ստիպված խնայում են իրանց կօպէկները, իսկ փոխարէնը գոնում են անմեղ երեխաներին»:

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Ամսին 15-ին, մի ոտու պաշտօնեայ, որը հիւր է լինում և կամ Բագրուտ—Գանձակ իր մի բարեկամի մօտ, ճաշից յետոյ գնում է արաւաքնաց. յանկարծ խեղճի տակին կոտորվում են արաւաքնացի փոսած աստիակները, և նա ընկնում է հողը, ընկնում է համարեա ամբողջովին սարսափելի գարշահոտ հեղուկի մէջ... Երկու ժամ տեղում է նրան այնտեղից հանելը: հանում են, լուսնում, ու խեղճը մի քանի ժամից յետոյ մեռնում է հորի գարշահոտ գազերից թունաւորելուց, ինչպէս վկայում է բժիշկը: Լսում ենք, որ տանտէրը, որն այնպիսի խախուտ արաւաքնաց էր պահում, օրիշուար պատասխանատուութեան է ենթարկված: Յուսով ենք, որ այդ դատը անհետեանք չի լինի. անփոյթ, յանցաւոր տանտիրոջ ստացած օրիշուար խիստ պատիժը մի տեսակ դատ, խրատ կը լինի գանձակեցի միս տանտէրերի համար: Այդ երկրորդ դէպքն է Գանձակում— վերջին տանտանակում, առաջինը պատանի է 90-ական թւականների սկզբներում, արաւաքնացի հորում տակտակների վրկիւնց խեղճվել է տեղացի մի կին»:

ՆՈՂԱՅՍԻՑ մեզ գրում են. «Այսպիսի ատի գաւառի Չորուկ գիւղացի ինչպիսի քանանայ Տէր-Յարութիւնեանցը, որը դեռ 1900 թւին Վեհափառ Կաթողիկոսի հրամանով իրագործ կարգադրու էր եղած քանանայական աստիճանից Կարսի և Ալեքսանդրապոլի գաւառներում իր կատարած բազմաթիւ ապօրինի և աննորմի պատկերներ, և անվայել ու անպատանջ վարմունքների պատճառով, որով և տեղիք էր տուել բազմաթիւ բողոքների, տրտուածների և անբաւականութիւնների վերջին տարիներումս չըջակայում էր Բեսարաբիայի թեմում և մասնաւորապէս Տաւրիկեան նահանգում և չը նայելով որ զրկված էր քանանայական աստիճանից, այնուամենայնիւ շարունակում էր իր ապօրինի քանանայագործութիւնը: Եւ թէ: Գրիգորի կոնստաւորիան դեռ 1901 թւին հրամայել էր իրան ենթարկվող հոգեւորական անձանց հետամուտ լինել յիշեալ Տէր-Յարութիւնեանցին և վերջինիս հոգեւոր

Աղքատախնամ հոգաբարձութեան խնդիրը շուտփութ է և նոր հրատարակված հայոց եկեղեցու ծխական կանոնադրութեան նախագիծը, որով համայնքի իրաւասութեան պիտի պատկանեն բարեգործութեան ընդհանուր անօրիշուարութիւնը, աստուածահաճոյ հաստատութիւնների պահպանութիւնը, վերահսկողութիւնը և դրանց կառավարող յատուկ հոգաբարձուների ընտրութիւնը—(Աւարատում 1902 թ. համար 9—7. էջ. 215)»:

Մեզ յայտնի չէ, թէ երբ այդ նախագիծը օրէնքի գորութիւն կտանայ, որ այնպիսի կարևոր է ծխական բարեգործութեան խնդիրը կանոնաւորելու համար: Դա զլիսատարապէս կախված է մեր հոգեւոր իշխանութեան ձեռնդրելիցութիւնից, որի օկիզը այդ հարցում արդէն զրկված լինելով, կարծում ենք այս անգամ արդէն ցանկ կայի վախճան կունենայ: Մնացածը կը հոգան ծխական համայնքները, որոնց սրբազան պարտքը կը լինի Գրիգորի անանիայի մարտիրոսութեան գործը որոշ կատարելութեան հասցնելը: Դրա համար հարկաւոր է միայն խնդրի կարևորութեան գիտակցութիւն և բարեխիղճ վերաբերումը, իբրև իւրաքանչիւր գործի բարգաւաճման անհրաժեշտ պայմաններ:

բարձրագոյն հաստատված է «Положение о приходских попечительствах при православных церквях». (Собрание узак. и распор. правительств, 5 Сент. 1864 г. № 73.)»:

պաշտամունքը կատարելու դէպքում յանձնել նրան մարմնաւոր իշխանութեան ձեռքը, սակայն կօնստաւորիայի երեքամեայ շնորհքը զուր անցան և յիշեալ կարգադրուկ քանանայ ամենայն համարձակութեամբ շարունակում էր խաբէ ժողովրդին և շահագործել նրա հաւատը: Ներկայ տարվայ գաղտնական տօներին գաւառի Մեկիտապօլ և օգտվելով այն հանգամանքից, որ Մեկիտապօլ զուրկ է հայ քանանայից, յիշեալ Տէր-Յարութիւնեանցը առաջարկում է Մեկիտապօլի կայ հասարակութեան իր պատրաստակամութիւնը հոգեւոր պաշտամունքը կատարելու: Տեղեկանարով այդ մասին, իսկոյն տեղիցս հետազոտելով թէ Մեկիտապօլի հայոց եկեղեցու երէցփոխին և թէ վիճակիս թեմակալ առաջնորդին ու կօնստաւորիային, որպէս զի վերջինս միջոցներ ձեռք անէ զսպելու վերոյիշեալ յանդուգն խաչագողին»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՄՈՒԹԻՒՆ

ԳԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊՐԵՍԸ

Գաղտնային դրութիւն է տիրում Բալկանեան թերակղզու վրա: Թիւրք կառավարութիւնն ամեն ջանք գործ է դնում Ռուսաստանի և Աւստրիայի նախագած բարենորոգումներն իրականացնելու, բայց այդ ջանքերի դէմ անաստիկ պատենչի նման կանգնել են իւճական արբանացիները և արգելք են հանդիսանում: Միւս կողմից իրանք մակեդոնացիներն են դժգոհ բարենորոգումներից, չեն հաւատում Թիւրքիայի խոստումներին և շարունակում են օրհասական մարտը, ցանկանալով աւելի հիմնաւոր ապանստութիւն ձեռք բերել իրանց հայրենիքի համար:

Անս այդպիսով զինված մակեդոնացիներ, արբանացիներ ու թիւրք զինուորներ կանգնած են իրար դէմ և կենսաբի և մահի կռիւ են մղում, արիւն են հոսեցնում, հետզհետէ աւելի խճճելով իրերի գրութիւնը, աւելի մթացնելով քաղաքական հորիզոնը:

Դեռ մի քանի օր առաջ Վիէնայի «Neue Freie Presse» հաստատ աղբիւրից հարդորում էր, որ 104 արանայի բէկեր հաւաքական բողոք են ներկայացրել Ուլիգե-Պէտտիկին և բուն դժգոհութիւն են յայտնում ընդհանրապէս մակեդոնական բոլոր բարենորոգումների վերաբերմամբ և տանձնապէս նոր դատարաններ մտցնելու դէմ:

Մի և նոյն ժամանակ Դէբէյի օսնյակի արբանացիները պատրաստակամութիւն են յայտնել ճնշելու մակեդոնացիներին, բայց որովհետեւ կառավարութեան կողմից մերժում են ստացել, ուստի որոշել են անկախ գործել այդ ուղղութեամբ և մի և նոյն ժամանակ ամեն ձեռք թափել բարենորոգումներին դիմադրելու համար: Մակեդոնացիներն էլ ասպարէզ են հանել իրանց ամբողջ ոյժը: Վերջին հետազոտները ցնցող լուրեր բերին նրանց գործունէութեան մասին:

Մակեդոնացիներն այրեցին Սալօնիկի Օտտօմանեան բանկը, օրը թոցրին մի քանի շինութիւններ, արիւնահեղ ընդհարումներ ունեցան թիւրքերի հետ—անս այդ լուրերը Լուսեր, որոնք կարծես մի մեծ տարագրիայի նախաբանն են գուժում ամբողջ աշխարհին»:

Աղքատախնամ հոգաբարձութեան գանձանակի նիւթական միջոցները կարող են գոյանալ ծխականների յօժարակամ նուէրներից, եկեղեցական արդիւնքներից, համայնքի ունեւոր անդամների կտակներով նուիրած գուժմարներից, պարբերական հանգանակութիւններից և այլ պատահական աղբիւրներից: Ժամանակի ընթացքում գանձանակի դրամական ապահովութիւնը կարող է միջոց տալ լայն բարեգործութեան և հոգակել համայնքի գործունէութիւնը այդ ասպարէզի վերաւ: Բայց մինչև ծխական կանոնադրութեան վերաջնութիւնը և հաստատութիւնը, որ յայտնի չէ, երբ կը լինի, մենք կառավարելինք մեր բոլոր ծխական համայնքներին՝ այժի սուսով ունենալով խնդրի կարևորութիւնը, այժի և իսկ իրանց միջոց ընտրել աղքատախնամ յանձնատողներ և նրանց միջոցով առանձին հրահանգներ մշակել իւրաքանչիւր ծուխի ամենաքաւարի և խեղճ անդամներին խնամելու գործը բարեկարգելու համար: Դրանով հայոց եկեղեցական ծուխը օկիզեն դրած կը լինէր մի հոգեւոր և հանրօգուտ ձեռնարկութեան, որի հիմքը և նպատակը պիտի լինի կատարել Մեծ Մարգու աշխարհին աւանդած մարդասիրութեան յաւերժ պատուէրը:

Ծ. Սպենդիարեան

ՊԱՐԻՉ: Ապրիլի 20-ին էրուսաղ թագաւորը անդիլիական դեպարտամենը ճաշ առեց Լուսիի պատուին

ՍՕՖԻԱ, Սաթուրիկը պաշտօնաւում է տանուհինգ հազար հոգուց բաղկացած զօրքը, չը հաշվելով քան հազար հոգուց բաղկացած թիւքը ազդեցականութիւնը, որ նայնպէս զինված է:

22 ապրիլի ԼԻՆԴԱՒԻ, «Lindauer Tageblatt»-ը հաղորդում է, թէ Իշխանուհի Լուիզան աղջիկը զաւակ է ծնել:

ՍՕՖԻԱ Միսիստրները մի քանի օր շարունակաբար ժողովի էին գումարվում:

Ապրիլի 20-ին Քոլչարիայում տեղի ունեցաւ պատգամաւորների լրացուցիչ ընտրութիւններ, որոնց մեծամասնութիւնը կառավարութեան օգտին է:

Արտաքին գործերի միսիստրները Սաթուրիկի անտարական գործակալից տեղեկութիւն ստացաւ, որ նա ձերբակալված չէ:

Ճիշտ չեն այն լուրերը, թէ զինամիտը Բոլգարիայից է ստացվում: «Вечерняя почта» պնդում է, թէ զինամիտը Աւստրիայից է ստացվում:

ԽՍՀՄ-ԳՐԻՆԻՍԵԱՆ ՅԱՅՏՆՈՒՄ Է

ԲԱՌՈՒՄ, Գ. Գրիգորեան, «Մշակ» ուղարկվում է Թոյ՝ Ս. Նազարեան՝ գրադարանի անունով:

ԽՍՀՄ-ԳՐԻՆԻՍԵԱՆ ԳՐԱՆՈՒՄ Է

Լուսաւորութիւնը ՔԱՄԻՆԻՍՏ ԳՐԱՆՈՒՄ Է

ՍՕՖԻԱ ԳՐԱՆՈՒՄ Է

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՎԸՆ ԵՎ ԵՄՄԱՆՈՒԼԸ

Յայտնում է ի դիտութիւն իրանց որոշող զբաղմունքը տեղաւորել ցանկացող ծնողների և խնամակարների, որ խնդիրներ ընդունելութիւնը քոլոր գաւառների—այսինքն՝ պատրաստակաւ դասարանի—փոքր, միջին և բարձր բաժանմունքների, I, II և III դասարանների կամար, կը լինի զարոցի կանցելարիայում մասինքի 1-ից մինչև 16-ը ամեն օր, բացի տուն և կիրակի օրերից, առաւօտեան ժամը 10-ից մինչև ցերեկվայ ժամը 1-ը:

Ընդունելութեան ընտելութիւններ կը սկսվեն մայիսի 21-ից: 1—3

ՎՐԱՅ ԱԶՆԻՍԱՆՆԵՐԻ ՔԱՄՐՈՆ

Հինգշաբթի, ապրիլի 24-ին Տ. ՎԱՐԴՈՒՆԻ ԵՎ Պ. ՏԵՐ-ԴԱՒԹԵԱՆ

Բարեհաճ մասնակցութեամբ ա. Մայսուրեանի և գերատեսչական խմբի անդամների, կը ներկայացնեն, առաջին անգամ:

I Ն Ի Օ Ր Է

Կամ ՍԱՐԳՍԵԱՆ ՎԱՐՃՈՒՅԻ

Ճարս 3 արար, Կնիքի փոխադ. Ա. Վրոյրի

II ՕՍԿԱՆ ՊԵՏՐՈՎԻՉԸ ԴԺՈՒՄԲՈՒՄ

Ճարս 1 ար, Կնք. Գ. Սունդուկեանցի Տեղերի շինք սովորական է:

Սկիզբը ճիշդ 8 1/2 ժամին երեկոյեան (շ. կ. է): 3—8

Въ Книжномъ магазинѣ Г У Т Т Е Н Б Е Р Г Ъ

(Перешель въ домъ Лалаева, рядомъ съ Коммерческимъ банкомъ).

ПРОДАЮТСЯ: Исторія Армянской церкви, А. Аннинскаго, 2 р.

Древніе Армянскіе историки, А. Аннинскаго, 1 р. 20 к.

Сношение Петра Великаго съ Армянскимъ народомъ, К. Эзова, 6 р.

Первые добровольцы Карабага, В. Потто, 60 к.

Армянская поэзія, Чалкушяна, 50 к.

Армянскій поэтъ Смбагъ Шахъ-Азизе, Ю. Веселовскаго, 1 р.

Современные Армянскіе поэты, 1 р.

Патріархъ всеѣхъ Армянъ Нерсесъ V, А. Ершова, 1 р. 50 к.

Литературные очерки: Байронъ на островѣ св. Лазара.—Шиллеръ и его герои.—Пушкинь, какъ европейскій писатель.—М. Бешикташянь.—Женская доля въ изображеніи армянскихъ литераторовъ и т. д.) Ю. Веселовскаго, 2 р.

Друзья и защитники животныхъ въ современной французской беллетристикѣ, Ю. Веселовскаго, 75 к.

Генераль адъютантъ Иванъ Давидовичъ Лазаревъ, 2 р. 2—3

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

Յայտնում է, որ համընդհանուր Յուրազմանի անունով առաջիկայ սեղանները ամօր սկզբին, թիֆլիսում բացվելու է աղվանց որբանոցը:

Որբանոցում ընդունվելու են թիֆլիսում բնակվող հայ-ուսաւորական 6-ից մինչև 12 տարեկան հասակի որբ աղջիկներ: Ընդունելութեան համար պէտք է ներկայացվի խնդիր, թիֆլիսի հայոց Բարեգործական Ընկերութեան Վարչութեան անունով: Խնդիր հետ լինելու է մտորքական և ուստիկանութիւնից չբաւարարութեան վկայականներ: Խնդիրներ ընդունվելու են մինչև յունիսի 1-ը ամեն օր, բացի կիրակի և տուն օրերից, առաւօտեան ժամը 11-ից մինչև 2-ը ընկերութեան գրասենեակում (Արմանսկի Բազար, Դոմ Գորոժե. Կրեդիտնո Բազար, Բազար): Մանրամասն տեղեկութիւններ կը տրվին խնդիրները ներկայացնելիս: 3—5

Շ ա Ր Ո Ն Ն ա կ Վ Ո Ւ Մ Է Պ Ա Տ Կ Ե Ր Ա Ջ Ա Ր Դ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ

IX և X դրերի բաժանորդագրութիւնը

Թիֆլիսի Լաւարդիւնարական Ընկերութեան Վարչութիւնը

Այսու խմբարարը խնդրում է ա. պ. բաժնետէրերին, կանոնադրութեան 28-րդ յօդուածի համաձայն, չորս բերել արտաքոյ կարգի ընդհանուր ժողովի: 25-ին ապրիլի 1903 թ., երեկոյեան ժամը 8-ին, Ընկերութեան գրասենեակը՝ Սերգիեվկայա փողոց, Փրիգոնովի տունը, № 27, ուր քննվելու է 25 բաժնեւտէրերի ներկայացրած յայտարարութիւնը:

Եթէ ձայների օրինական թիւ պակասութեան պատճառով ժողովը չը կայանայ, նշանակվում է նոյն տեղում երկրորդ ժողով ապրիլի 28-ին, որը կը համարվի վաւերական, ի նկատի չառնելով ձայների քանակութիւնը (ապ. 28, 25) 1—2

ՀԱՅ ԾՆՈՂՆԵՐՈՒՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԻՇԵՐՈԹԻԿ ԴՊՐՈՑ

1 Օ Ջ Ա Ն, Ջ ՈՒ Ե Ց Ե Ր Ի Ա Երկրորդ տարի

(16-րդ անգամից սկսելով, ձեռնուան վեցամեային դասերը կը սկսին սեպտ. 1/1-ին) Արեւելեան կամ հայկական դպրոցը կընդունի 10-էն 20 տարեկան աշակերտներ, որոնց կուտայ, ծնողներու բաղձաւորին համաձայն, գիտական, գրական, առեւտրական կամ արհեստագործական առողջ ու կրթնաւոր կըլծութիւնը ներդաշնակօրէն և սերտ կերպով միացած ազգային կրթնական դաստիարակութեան հետ: Մեր հայ սաներուն կաւանդելը, և այս ուսանց ու է մասնաւոր վճար ու ժ. ի, հայոց լեզու (առասանայե տաճկանայ բարբառ), մատենագրութիւն հայոց (կին և նոր), հայոց պատմութիւն և այլն: Թուրքիա յայտարարութիւնը կարող են նաև ուսանել առևտայ լեզուն: Դպրոցիս տարեթիւնը, հակառակ իր ընծայած բազմաթիւ իրական առաւելութիւններուն, անօրինակ կերպով չափաւոր է: Ընտանեկան կեանքը—Դպրոցիս յայտագիրը ամեն ուղղի կը լրկուի: Տարէն՝ Մ. Նալբանդեան, դպ. գիտութեանց՝ պրիվատ-դոցենտ 6—27

1) Longeraie, Lausanne, Suisse

ԹԻՖԼԻՍԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎՃԱՌԱՆՈՑՈՒՄ

Ի միջի այլ հրատարակութիւնների վաճառվում են հետևեալ նոր գրքերը՝ 1) ԲՈՒԴՈՒՂԱՆԱՆ Ա. ԲՃ., Ստամբուլի կատարը (ստամբուլի մի քանի հիւանդութիւնները) 1 պատկերով, Պետեր. 1903 թ. 20 կ. 2) ԹԱՌԱՅԵԱՆ Ս. Ղօղա-փիւ, Շիլլեր, բանաստեղծ-իդէալիստ, պատկերազարդ, ըստ թղթի վրա տպված, 1903 թ., Պետ. անկազմ 1 ր. 50 կ., չքեղ կազմով՝ 2 ր. 50 կ. 3) ԹԻՖԼԻՍԻՆԻՆԱՆ ԱՐՄ., Գերբազմաը երիտասարդաց, գ. աղպ., Կ. Պօլիս, գ. 50 կ. 4) ՏԵՐ-ԴԱՒԹԵԱՆ Կ., Մոցի երգարան, Բ. աղպ., բարիիտյած, 1903 թ. Թիֆլ. գ. 40 կ. 5) Բանաստեղծութիւններ, 1903 թ. Թիֆլ. գ. 25 կ. 6) Թարգմանութիւն Պոչկինից՝ Ուկրի ձկնիկ, 1903 թ. Թիֆլ. գ. 10 կ. 7) ԳԼԵՄԱՆ Ղօղա, Ամուսնական առողջապահութիւն, Կ. Պօլիս, գ. 50 կ. Դիմել՝ Վ. Թիֆլիս, Կ. Կենտրոնայ Կուխնայ Թորգովյու. (ե. ու.) 5—5

Մ Ղ Թ Ա Յ

ՆԱԽՔԱՐԴԻՆԱՐԻՍԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ յայտարարում է ի գիտութիւն ա. պ. բաժնետէրերի, որ նշանակված է 50% վճար, այսինքն իւրաքանչիւր փային 8 րոպէի, այն ապրիլի 25-ից մինչև 30-ն ներկայված և մայիսի 1-ից մինչև 10-ը ներկայված տուգանքով, համաձայն ընկերութեան պայմանագրի 7-րդ յօդուածի: Վճարները կընդունվին վարչութեան գրասենեակում առաւօտեան 9 ժամից մինչև ժամը 2-ը և երեկոյեան 6 ժամից մինչև 9 ժամը: Բաժնետէրերը վճարները ներկայացնելու ժամանակ պէտք է ներկայացնեն բաժնետուները: (17, 23 և 30 ապ.) 2—3

Ս ՊԵՏԵՐՐՈՒՐԻԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն Ա Պ Է Թ Գ Ա

Ճովային, գետային և ցամաքային ապահովագրութեան, ապրանքների տեղափոխութեան և գաւազները կրակից ապահովագրելու համար: ՀիՄՆՎԱՅ Է 1847 ԹԻՒՆ

Հիմնական գրամագլուխը 1,650,000 ռուբլի Պատշաճի գրամագլուխը 2,664,808

I. Ա Պ Գ Ա Ն Գ Ե Ր Ի Տ Ե Ղ Ա Փ Ո Ն Ո Ւ Թ Ի Ե

Աւելի քան 300 գործակալութիւններ եւրոպական Թուրքիայի, Կովկասի, Միջին Ասիայի, Սիբիրի և հասար Արեւելքի բոլոր նշանաւոր տեղերում, նոյնպէս և ներկայացուցիչներ արտասահմանի գլխաւոր քաղաքներում:

Ցեղափոխութիւն ամեն տեսակ բեռների և իրերի, որոնց ընդունելութիւնը և յանձնուող կատարվում է թէ ամբողջ թէ անհատներում ու խանութներում:

Յանձնուան բեռների ուղարկողները կողմից առաջարկված պայմաններով (վերադիր ձևարներ և հայր սուրբիցները, դրամի փոխադրութիւն (ԹԵՐՅՈՎՈՒՄ) բեռները յանձնելու տեղը կ'ապահովուի համար և այլն):

Ապահովութիւն բեռների արտանետ պայմաններով ստացման տեղերում՝ ապահովագրելով նրանց պահպանութեամբ, որի համար շատ կէտերում կան ընդարձակ պահպաններ, յատկապէս բեռները պահելու համար:

II. Ն Ա Ի Ա Պ Ե Ա Ց Ո Ւ Թ Ի Ե

Սեփական մարդատար, ապրանքատար և ձկն չորհուսեր, ճովային և գետային նաւեր (70 նու):

Բեռակիր և մարդատար նաւերի տարբերական կազմակերպութիւն Վոլգա գետի բոլոր նուստանքիտաների մէջ, Ռիբնիսկից մինչև Աստրախան, և Կասպից ծովի բոլոր նաւահանգիստները մէջ, Աստրախանից մինչև Գարսիա-Մարտի տարբեր: Ամուսնացուած պահպաններ ներմուծում (տիբերական նաւամատոյցի վրա), Աստրախանում, Բազում և Կրասնովոդսկում:

Բեռները անընդհատաբար ուղարկելու համար ընկերութեան չորհուսաւորութիւնը կ'աւանդուի իրենց և կ'ապահովուի երկաթուղիների հետ: Այն ապրանքների տեղափոխութեան համար, որոնք ուղարկվում են Թուրքիայից Գարսիա-Մարտի և Գարսիա-Մարտից Թուրքիայի, գոյութիւն ունի առանձին, բացառիկ առօրեայից ընկերութիւնը, համաձայնութիւն Գարսիական ապահովագրական և տեղափոխութեան ընկերութեան հետ:

III. Ա Պ Ա Ն Վ Ա Պ Ե Ր Ա Ն Գ Ո Ր Ծ Ե Ր